V

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական իրավախախտման գործով 28.06.2021թ. կայացված ԱՖ725639 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<22>> 07 2021թ. 7-13 11296 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Տիգրան Հովսեփյանի ՄԴ/58322-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Քաղաքացի Տիգրան Հովսեփյանը / **ծանուցման հասցե՝ քաղաք Երևան Ամիրյան փողոց, 23/1** / դիմումով խնդրել է բեկանել 28.06.2021թ. կայացված ԱՖ725639 որոշումը՝ նշելով իր անհամաձայնությունը որոշման հետ: Միաժամանակ հեռախոսակապի միջոցով հայտնել է, որ դիմումին ավելացնելու ոչինչ չունի, խնդրել է դիմումը քննարկել առանց իր մասնակցության և արդյունքների մասին տալ գրավոր պատասխան:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործով 28.06.2021թ. կայացված ԱՖ725639 որոշումը ենթակա է կատարման հետևյալ պատճառաբանությամբ.

<< Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին>> ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասի <<բ>> կետր համաձայն՝ մեխանիկական տրանսպորտայնի միջոցի վարորդը պարտավոր է կառուցվածքով նախատեսված անվտանգության գոտիներով կահավորված տրանսպորտային միջոցներով երթևեկելիս լինել ամրակապված և չփոխադրել անվտանգության գոտիներով չամրակապված ուղևորներ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123.3-րդ հոդվածի համաձայն տրանսպորտային միջոցների անվտանգության գոտիները չամրակապած կամ սաղավարտը չկոճկած վիճակում կամ առանց սաղավարտի տրանսպորտային միջոցներ վարելը, ինչպես նաև անվտանգության գոտիները չամրակապած կամ սաղավարտը չկոճկած կամ առանց սաղավարտի ուղևոր փոխադրելը՝առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ 28.06.2021թ. ժամը 19:25-ի սահմաններում Երևան քաղաքի Զվարթնոց օդանավակայանում դիմումատուի վարած <<KIA>> մակնիշի 11TG101 հաշվառման համարանիշի ավտոմոբիլը կանգնեցվել է Ճանապարհային ոստիկանության ուղեկցող սպայական վաշտի 2-րդ սպայական դասակի տեսուչ, ոստիկանության կապիտան Մ.Մինասյանի և նույն դասակի տեսուչ, ոստիկանության կապիտան Ա.Սարգսյանի կողմից՝<< ճանապարհային երթևեկության անվատնգության ապահովման մասին>> ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասի <<բ>> կետի պահանջը խախտելու համար, այն է՝ վարորդը երթևեկել է անվտանգության գոտին չամրակապված: Վարորդի նկատմամբ կազմվել է վարչական իրավախախտման

վերաբերյալ արձանագրություն և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի և 123.3-րդ հոդվածի համաձայն կայացվել է ԱՖ725639 որոշումը:

Ճանապարհային ոստիկանության ծառայողների կողմից տրված պարզաբանման համաձայն դիմումատուի կողմից կատարված իրավախախտումը հիմնավորող՝ տեխնիկական միջոցների կիրառմամբ ձեռք բերված այլ ապացույցներ առկա չեն, սակայն իրավախախտումը եղել է անմիջապես իրենց տեսադաշտում, ակնհայտ և պարզ տեսանելի, ինչի կապակցությանբ կազմվել է համապատասխան արձանագրություն, և կայացվել է ԱՖ725639 որոշում: Ոստիկանության ծառայողները նշել են նաև, որ իրենց և վարորդի միջև ծառայողական բնույթի խոսակցություններից բացի այլ խոսակցություններ չեն եղել:

<<Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին>> օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի <<ա>> կետի համաձայն՝ ճանապարհային երթևեկությունը կարգավորող ոստիկանության ծառայողը պարտավոր է սույն հոդվածի երրորդ մասով սահմանված կարգով ազդանշան տալով կանգնեցնել տրանսպորտային միջոցը, եթե՝ ակնհայտ կամ տեխնիկական միջոցների օգտագործմամբ երևում է, որ վարորդը խախտել է ճանապարհային երթևեկության կանոնների պահանջները, կամ տրանսպորտային միջոցի ընթացքը կամ տեղափոխվող բեռը, կամ վարորդը կամ ուղևորներն իրենց վարքագծով ակնհայտորեն վտանգ են ստեղծում երթևեկության անվտանգության համար: Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ երթևեկության սահմանված արագության գերազանցման և տրանսպորտային միջոցների ապակիների լուսաթափանցելիության սահմանված չափի խախտումների համար պատասխանատվություն է առաջանում, երբ տվյալ խախտումը փաստարկված է համապատասխան տեխնիկական միջոցների կիրառմամբ:

Այսպիսով, դիմումատուի արարքում առկա են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի և 123.3-րդ հոդվածի հատկանիշները, իսկ ԱՖ725639 որոշումն օրինական է և հիմնավոր, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական իրավախախտման վերաբերյալ գործով 28.06.2021թ. կայացված ԱՖ725639 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Տիգրան Հովսեփյանին և Ճանապարհային ոստիկանության ուղեկցող սպայական վաշտ:

Ե. Կարապետյան

Կատարող Գ.Հրայչան
Հեռ. 011-544-783